
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՇՈՏ ԳԱԼՍՅԱՆ

Գիտական գրականության մեջ գեղարվեստական վավերագրությունը հաճախ անվանում են մեմուարային գրականություն, որի մեջ մտնում են հուշագրությունը, ուղեգրությունը, փաստագրությունը, օրագրությունը և էսսեն: Գեղարվեստական վավերագրությունն առանձին ժանր է, որի լեզվաբանական հետազոտությունը հետաքրքրություն է ներկայացնում ժանրի՝ «թեմա – կառուցվածք – ոճ» եռանկյան լեզվական հիմքերի առումով:

Լեզվաբանական գրականության մեջ առաջադիր խնդրի որոշ տեսակների (հուշագրական և ինքնակենսագրական արձակ) երբեմն անվանում են լեզվաբանական անձնաբանություն¹: Հեղինակը հիշողության մեջ ամրապնդված նյութը որոշակի որակական փոփոխությունների է ենթարկում՝ աներկբա ներառելով իր հեղինակային ես-ը: Այստեղ նա դիտվում է սոցիալական և անհատական գծերի համադրությամբ մի կերպար, որը կարող է ստեղծված երկում հանդես գալ սեփական նախաձեռնությամբ: Հատկանշական է Ս. Կապուտիկյանի «Քարավանները դեռ քայլում են» երկի հետևյալ հատվածը. «Թող ների ինձ ընթերցողը, էթե գրքում հաճախ հանդիպի անձնական դերանվան առաջին դեմքի հոլովումներին՝ ես, ինձ, ինձնից, ինձնով և այլն: Գիտեմ, որ ինչքան էլ ջանամ խուսափել դրանցից ու եղածի աննշան մասը նկարագրեմ, դարձյալ պատմելիքիս այս կամ այն կտորը կստանա ինքնագրության շեշտեր...»²:

Դժվար չէ նկատել, որ գեղարվեստական վավերագրության կառուցվածքային տիրույթում մենք գործ ունենք լեզվական անհատի հետ, որը գոյություն ունի լեզվական տարածություններում: Այս դեպքում հեղինակի կերպարն այն ամրացնող ուժն է, որը տեքստի լեզվական միջոցները շաղկապում է գեղարվեստական համակարգին: Այդ կերպարը գեղարվեստական վավերագրության բնագրերի ներքին առանցքն է, որի շուրջ հյուսվում է տեքստի լեզվաոճական համակարգը: Զգալի չափով տեղ հատկացնելով ինքնակենսագրական տարրերին՝ հուշագրության հեղի-

¹ В. П. Н е р о з н а к. Лингвистическая персонология: к определению статуса дисциплины.– Язык. Поэтика. Перевод, М., 1996, с. 112–116.

² Ս. Կ ա պ ո տ ի կ յ ա ն. Երկերի ժողովածու 2 հատորով, հ. II, Երևան, 1973, էջ 12:

նակն ինքն է որոշում ստեղծագործության լեզվական արտահայտչաձևը, գույները, հիմնարար գծերը:

Բնականաբար, ամեն մի բնագիր, այդ թվում՝ գեղարվեստավերագրական ստեղծագործություն, ենթարկվում է կառուցվածքային որոշակի օրինաչափությունների: Հուշերում ուշագրավ է հիշողություն, հանդիպում, հրաժեշտ հասկացությունների (կոնցեպտների) առկայությունը: Ժամանակակից ճանաչողական լեզվաբանությունը հասկացույթը դիտարկում է որպես մտքի կառուցվածքային միավոր, որը կողմնորոշված է ուսումնասիրվող հուշագրության լեզվատիրություն: Հասկացույթի կարևոր բաղադրիչներից մեկը լեզվական այդ նշանի իմաստային բնութագրությունն է, որը, ըստ էության, կապվում է բառի արմատական նշանակության և լեզուն կրողների հոգևոր արժեհամակարգի հետ:

Հուշ-դիմանկարներում արդարացվում է հիշում եմ, վերհիշում եմ բայաձևերի հաճախադեպ գործածությունը. այսպես՝ «Հիշում եմ: Մի անգամ, երբ մեր ծննդավայրում էինք, Վարպետն ասաց՝ ջրադաջի եմ կարոտել, արի երթանք: Ճամփա ընկանք»³: Հուշագրության լեզվում հաճախադեպ կիրառություն ունեն «այսօրվա պես հիշում եմ», «առաջին անգամ տեսա» կադապարները. «Այսօրվա պես հիշում եմ, նա ցույց տվեց ինձ մի էջի վրա գրված թղթերի մի ոչ մեծ ծալ», «Բուլվարում առաջին անգամ տեսա նրան»⁴:

Գեղարվեստական վավերագրության կառուցվածքային հնար է նամակի՝ որպես երկխոսության յուրահատուկ տեսակի գործածությունը բնագրում (օրինակ՝ նամակը օրագրության մեջ): Նամակը լրացնում, ամբողջացնում է խոսքաշարը, ի հայտ է բերում նամակագրի լեզվամտածողությունը, ցուցադրում խոսքի կառուցվածքը: Դրանք, գործածվելով գեղարվեստական վավերագրության լեզվատիրություն, դառնում են այդ ժանրի կառուցվածքային տարրեր: «Անմիջապես մի նամակ եմ գրում (Վ. Բյուրատ.– Ա. Գ.) Բսահակյանին. «Միրելի՛ Վարպետ, մի թե դեռ տվայտելու եմ այս ավագոտ երկրում և արժանի չեմ լինելու հայրենիքիս և Ձեր կարոտն առնելու»⁵:

Բնագրային նման դրսևորումները տեքստի ոճաբանության մեջ անվանում են տեքստը տեքստում, որի դեպքում պիտի գործ ունենանք միջտեքստային առնչությունների հետ⁶:

Ֆրանսիացի տեսաբան Ժ. Մ. Շեֆերը համառորեն հանդես է գալիս հանուն գեղարվեստական վավերագրության ժանրի անորոշության և սահմանների շար-

³ Ավետիք Բսահակյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 2006, էջ 57:

⁴ Գ. Մ ա հ ա թ ի. Երկերի ժողովածու հինգ հատորով, հ. V, Երևան, 1989, էջ 446, 450:

⁵ Ավետիք Բսահակյանը ժամանակակիցների հուշերում, էջ 39:

⁶ А. И. Горшков. Русская стилистика. Стилистика текста и функциональная стилистика. М., 2006, с. 85.

ժունակության: Նա նկատում է, որ ժամանակ առ ժամանակ խախտվում են նաև այդ ժանրի սահմանները⁷: Մա նշանակում է, որ այդ սահմանները կարող են լինել հարաբերական, ժանրային դրսևորման ձևերը՝ բազմազան: Նկատելի է, որ հուշագրությունը դրսևորում է ներժանրային հարուստ բազմազանություն: Այսպես՝ հուշերում կարող են օգտագործվել օրագրության կառուցվածքային միավորներ:

Գեղարվեստական վավերագրության հեղինակները երբեմն ընթերցողին հաղորդում են հավելյալ փաստեր, որոնք քաղել են ականատեսների պատմությունից և տարբեր աղբյուրներից: Օրինակ՝ Մ. Ղուկասյանի «Անվերնագիր...1915» փաստագրության մեջ բերվում է Միմեոն Դպիր Լեհացու «Ուղեգրությունից» մի հատված, որտեղ ներկայացվում է Փոքր Հայքի Մարագում լեռան փեշին կառուցված Ս. Նշան եկեղեցին: Փաստագրության հեղինակը հետաքրքիր ակնարկ է ներկայացնում Սուրբի մասին:

Ուղեգրության հեղինակները հաճախ ընդհատում են «դիպաշարը» և ներկայացնում համառոտ տեղեկանք պատմական որևէ իրողության վերաբերյալ՝ դրանով ավելի ամբողջական դարձնելով ներկայացվող նյութը:

Գեղարվեստական վավերագրության պատմմներում հեղինակները հաճախ են մեկնում այս կամ այն բառը, տալիս բառիմաստի հավելյալ բացատրություններ. օրինակ՝ «Սաղ գյուղը չրաղվան էր արել (չրաղվան, այսինքն՝ բոլոր տներում վառել էին նավթի լամպերը, բոլոր մումերը)»⁸: Այս երևույթը գեղարվեստական վավերագրության կառուցվածքային էական հատկանիշներից է: Կարելի է ընդգծել՝ առաջադիր ժանրը ձեռք է բերում բառարանային գործարանական արժեք:

Հր. Աճառյանի «Կյանքիս հուշերից» երկում թուրքերեն մի շարք անունների դիմաց տրվում են հայերեն բացատրություններ. «Քաղաքի թաքիրդաղ թուրքերեն անունն առաջացել է հայոց Սուրբ Թագավոր եկեղեցու անունից»: Կամ՝ չիչակչի՝ «վաղահաս ընտիր մրգեր ծախող պտղավաճառ», խոնախ՝ «ապարանք, մեծ տուն», դաչկա՝ «երկանիվ սայլ», մուխթար՝ «թաղապետ», խովուշ՝ «մեծ սրահ»⁹ և այլն:

Ընդհանրապես, բառաքնական դիտարկումների ժամանակ կարևոր տեղ է տրվում բառապաշարի իմաստային-ոճական տարբեր խմբերի դասակարգմանը:

Սովորաբար հուշային դիմանկարներում աչքի են զարնում տվյալ ոլորտը և այդտեղ գործող անհատին ներկայացնող բառաշերտեր, որոնք, ըստ էության, հարստացնում են հուշագրության լեզուն: Օրինակ՝ եկեղեցական առաջնորդների ներկայացնող հուշերում մեծապես գործածվում են

⁷ Ж.-М. Ш е ф е р. Что такое литературный жанр. М., 2010, с. 192.

⁸ Վ. Պ ե տ ր ո ս յ ա ն. Հավասարում բազմաթիվ անհայտներով, Երևան, 1977, էջ 81:

⁹ Հր. Աճ ա ո յ ա ն. Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 9:

ա. վանքերի, եկեղեցիների, տաճարների անուններ՝ Ս. Գեղարդ վանք, Խոր Վիրապի վանք, Մեյդանի Ս. Գևորգ եկեղեցի, Անթիլիասի մայրավանք, Հաճկատարի վանք, Ս. Շողակաթ եկեղեցի և այլն,

բ. եկեղեցական զգեստների անուններ՝ թասակ, վեղար, կնգուղ, հայրապետական քող, սքեմ, պարեգոտ (կապա), սև գլխարկ (թասակ), փարաջա,

գ. նվիրական առարկաների անուններ. որպես պատվո նշան քահանայական կարգ ունեցողներին շնորհված իրեր՝ լանջախաչ, եպիսկոպոսական մատանի, պանակե, ձեռաց խաչ,

դ. կրոնական գրքերի անվանումներ՝ Սուրբ Գիրք, Աստվածաշունչ, Ավետարան, Յայսմաուրք, «Վեհամօր Աւետարան», Ճաշու գիրք կամ «Ճաշոց»,

ե. կրոնապետերի կացարան-նստավայրերի՝ տեղի իմաստ արտահայտող -արան վերջածանցով անվանումները՝ կաթողիկոսարան, վեհարան, պատրիարքարան, առաջնորդարան:

Ճարտարապետական կառույցի ընկալումը երևան է հանում համապատասխան բառափնջի գործածությունը՝ տաճար, եկեղեցի, վանք, մատուռ, խորան, սյուն, սյունաշար, ժամատուն, եպիսկոպոսանիստ և այլն:

Թատերական հուշերում¹⁰ արդարացված է թատրոն, արվեստ, հանդես, բեմ, դեր, խաղ միավորներով բառաձևերի գործածությունը՝ թատերախումբ, թատերագիր, թատերասեր, թատերաշրջան, թատերարվեստ, թատերախոս, թատերասրահ, թատերաբեմ, գեղարվեստ, բարձրարվեստ, բեմարվեստ, բեմահարդար, բեմավիճակ, նախաբեմ, խաղացանկ, խաղընկեր, խաղառճ, խաղակից, դերացանկ, դերաբաշխում, դերակատար, դերախաղ, հյուրախաղ, դիմախաղ, թատրոնախաղ և այլն:

Կերպարվեստին բնորոշ բառերի շարքում առատ են նկար վերջնաբաղադրիչով բառամիավորները՝ ինքնանկար, դաշտանկար, դիմանկար, ինքնադիմանկար, գրչանկար, գծանկար, մատիտանկար, ձեպանկար, բնանկար, մանրանկար, խտանկար, հայանկար և այլն:

Հուշ-դիմանկարների լեզվում հաճախ են դիտարկվում մարդու կյանքի շրջափուլերը՝ մանկություն, պատանեկություն, երիտասարդություն, ծերություն: Ս. Կապուտիկյանին նվիրված հուշերում այդ անունները հաճախակի կիրառություն ունեն. «Սիրելի՛ Հասմիկ Կանայանին, որ իրենով իմ մեջ նորոգում է մանկության և երիտասարդության թանկագին հիշատակները», «Իմ պատանության ու երիտասարդության ու... նաև ծերության հավատարիմ ընկերուհուն՝ սիրելի Հասմիկին»¹¹:

¹⁰ Մենք նկատի ունենք Դ. Դեմիրճյանի «Հուշեր և խոհեր հայ դրամատուրգիայի և թատրոնի մասին» (Երևան, 1958), Վ. Վաղարշյանի «Ընկերներս, բարեկամներս և ես» (Երևան, 1959), Վ. Փափագյանի «Հետադարձ հայացք» (Երևան, 1981), Գ. Ջանիբեկյանի «Թատրոնի հետ» (Երևան, 1980) հուշագրությունները:

¹¹ Միլվա Կապուտիկյանը մեր հուշերում և խոհերում, Երևան, 2008, էջ 180–181:

Հուշագրության լեզվի գլխավոր շերտերից է նկարագրական խոսքը: Առաջնային են նախ բնակավայրերի (քաղաք, թաղամաս, բակ), ապա՝ տարբեր կառույցների (տուն, սենյակ, կամուրջ և այլն) նկարագրությունները, որոնք ընդելուզվում են պատումի ընդհանուր շղթային՝ ամբողջացնելով պատմողի ասելիքը: Հասկանալի են Հր. Աճառյանի «Կյանքիս հուշերից» երկի Ռոդոսյոն քաղաքի նկարագրությունը, Ե. Չարենցին նվիրված հուշերում՝ Կարսի նկարագրությունը, Վ. Վաղարշյանի հուշագրության շղթայում՝ Շուշիի նկարագրությունը, Ն. Թումանյանի հուշերում՝ Վերնատան նկարագրությունը և այլն: Նկարագրական այդ հատվածներում նկատելի են լեզվաբանական տարբեր կարգերի դրսևորումների միջև եղած ընդհանուր գծեր: Միննույն կամ նման գաղափարները հաճախ հանդես են գալիս տարբեր կարգերի պատկանող իմաստներն արտահայտելու համար: Այսպես՝ տեղի կարգին հատուկ առջև, տակ, կողքին, հետևում (եկեղեցու կողքին, պատերի տակ) իմաստներին հարաբերակից են ժամանակի կարգին հատուկ այժմ, հետո (այժմ նկարագրել, հետո նետիր) իմաստները, թվի կարգին հատուկ մեկ, երկու, շատ, քիչ (մեկ օր, երկու սենյակ, շատ ձիրք, քիչ ժամկո) իմաստներին՝ հաճախականության կարգին հատուկ շատ անգամ, շարունակ իմաստները: Նկատելի է, որ այս կարգերի միջև կան ներքին կապեր:

Հարկ է նշել, որ այս կամ այն հատվածների նկարագրությանը երբեմն ներհյուսվում են տարբեր դիմանկարներ:

Գեղարվեստական վավերագրության լեզվական տիրույթն ամբողջացնում են նաև շրջասական արտահայտությունները: Այսպես՝ Պ. Սևակը բնութագրվում է նոր Մանուկ Աբեղյանի¹², Մոնթե Մելքոնյանը՝ Արցախի արծիվ, նոր Նժդեհի¹³ շրջասություններով: Հուշագրության լեզվում գործածական են երեք անձանց բնութագրող շրջասության օրինակներ. այսպես՝ Վիլյամ Մարոյան, Վիկտոր Համբարձումյան, Վազգեն Առաջին՝ XX դարի երեք մեծ հասակակիցներ, Մարտիրոս Մարյան, Հարություն Կալենց, Մինաս Աստվածներ գույների¹⁴ և այլն:

Այսպիսով՝ ժամանակակից լեզվաբանության մեջ գեղարվեստական վավերագրության ուսումնասիրության առարկայի կենտրոնում մնում է մարդ – անհատականության լեզվական – գեղարվեստական իրականացումը, որն ստեղծվում է ժանրին հատուկ լեզվական մեխանիզմներով: Ժանրի էական առանձնահատկություններից առավել կարևոր է խոսքային կադապարների և լեզվական յուրահատուկ կառույցների առկայությունը: Բնագրի որոշ հատվածներ կառուցվում են լեզվական (բառերի բացատրություն, ստուգաբանություն, նկարագրական խոսք և այլն) և արտալեզվական (համապատասխան միջավայր,

¹² Լ. Հ ա խ վ ե թ ղ յ ա ն. Պարույր, Խոհագրություն, Երևան, 1987, էջ 5:

¹³ Ա. Մ ա ռ ու կ յ ա ն. Հուշեր, Երևան, 2007, էջ 310–311:

¹⁴ Գ. Գ ու ը զ ա ղ յ ա ն. Խոհեր... խոհեր..., էսսեներ, Երևան, 2007, էջ 335:

փաստեր, իրողություններ և այլն) շերտերից: Հուշ-դիմանկարներում, ըստ գործածության ոլորտների, առանձնանում են տարբեր բառախմբեր (կրոնաեկեղեցական բառապաշար, ճարտարապետական կառույցին, թատրոնին և կերպարվեստին բնորոշ բառեր, բառակապակցություններ և այլն):

ЛИНГВИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ХУДОЖЕСТВЕННОГО ДОКУМЕНТАЛИЗМА

АШОТ ГАЛСТЯН

Резюме

Художественный документализм является отдельным жанром, изучение лингвистических особенностей которого важно с точки зрения триединства «тема–структура–стиль». В современной лингвистике в центре изучения предмета художественного документализма остается лингвистическое художественное становление человека-индивидуальности, которое создается с помощью особых языковых механизмов. Наличие речевых моделей и специфических лингвистических конструкций важнее, чем существенные особенности жанра. Некоторые части строятся из лингвистических (толкования слов, этимология, описательная речь и т. д.) и внеязыковых (соответствующая среда, факты, события и т. д.) слоев. В мемуарных портретах, соответственно со сферой деятельности персонажа, выделяются разные группы слов (религиозно-церковная лексика, слова и словосочетания, характерные для архитектурных строений, театра, живописи и т. д.).

LINGUISTIC PECULIARITIES OF ARTISTIC DOCUMENTARY GENRE

ASHOT GALSTYAN

Summary

The artistic documentary literature is a specific genre, the study of linguistic peculiarities of which is important from the triunity viewpoint 'theme – structure – style. In modern linguistics the center of the study of artistic documentary genre remains the linguistic artistic realization of the man-individual, which is created by specific linguistic mechanisms. The presence of speech models and specific linguistic constructions is more important than essential peculiarities of the genre. Some parts are built with linguistic (explanations of words, etymology, descriptive speech, etc.) and extra-linguistic (corresponding milieu, facts, events, etc.) layers. According to character's activity spheres, diverse groups of words stand out in memory portraits (words related with religion and Church, architectural monuments, theatre, art, etc.).